ԿՔՆՆԱՐԿԵՆ առանց լրագրողների

Երեկ կայացավ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը: ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը ներկայացրեց ակադեմիայի կատարած աշխատանքն ու խնդիրները: *«Պրն Մարտիրոսյանն ընդամենը 7-8 ամիս է աշխատում եւ լուրջ ձեռքբերումներ ունենալու մասին խոսելը սխալ է: Բայց 3 կարեւոր բան կատարվեց՝ տնօրենների ու թղթակից անդամների ընտրություն, գիտական կենտրոնների ստեղծում»,*- փաստեց Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ Հրանտ Մաթեւոսյանը:

ԳԱԱ նախագահի տվյալներով, Հայաստանը գիտությանը շատ քիչ պետական ֆինանսավորում հատկացնող երկրներից է (2007 թվականի պետական բյուջեով գիտությանն համար առանձնացված է 5.5 միլիարդ դրամ): Նա նշեց, որ այժմ իրենց կոլեկտիվում *«բանիմաց եւ հարգանք վայելող գիտնականներ են աշխատում, իսկ տարիքով մեծերը նրանց խորհրդականներն են»:*

2006-ին ակադեմիան համալրվել է 36 նոր թղթակից անդամներով, ովքեր, ըստ Ռ. Մարտիրոսյանի, արժանի եւ անվանի գիտնականներ են: Որոշ գիտնականների համոզմամբ, թղթակից անդամներ են դարձել միայն թիկունք ունեցողները: Ռ. Մարտիրոսյանը նաեւ հայտնեց, որ ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանին ինքն առաջարկել է վաճառել ակադեմիային պատկանող որոշ տարածքներ, որպեսզի ստեղծվի գիտության հիմնադրամ: *«Վարչապետին ասվել է նաեւ աշխատավարձերի բարձրացման մասին, որը ժամանակին կատարվել էր մասնակիորեն: Գիտության դոկտորի աշխատավարձը, օրինակ, 40.000 դրամ է: Տեղեկատվական համակարգի գրադարանի վիճակը ծանր է, համապատասխան արդի գրականություն չկա, չկա ո՛չ համակարգիչ, ո՛չ էլ ինտերնետ»,*- դժգոհեց ԳԱԱ նախագահը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի ղեկավար, պրոֆեսոր Սիներիկ Հայրապետյանն էլ «Առավոտին» փոխանցեց. *«ԳԱԱ գործունեությունից պարզ է դառնում, որ ամեն ինչ արվում է ոչ թե հանուն գիտության, այլ կոռուպցիայի եւ խմբակայինց շահի: Ցանկացած քաղաքացի, ում հասու է ինտերնետը, եթե փորձի գտնել նախկինում եւ նոր ընտրված կենսաբանության բաժանմունքի ակադեմիկոսների եւ թղթակից անդամների վարկանիշները (իսկ գիտնականի վարկանիշը գոյանում է նրանից, թե քանի անգամ են հղում արել իր աշխատանքներին), արդա կտեսնի, որ ակադեմիկոսներից շատերի համար դրանք զրոյական են»:*

ԳԱԱ ընդհանուր ժողովին ներկա էր նաեւ Սերժ Սարգսյանը: Նա լրագրողներին հավաստիացրեց, որ կառավարությունում փոփոխությունները բացառվում են, քանի որ 40 օր է մնացել աշխատելու: Ինչ վերաբերում է ակադեմիայի խնդիրներին, այս մասին էլ պրն Սարգսյանը ասեց. *«Ռադիկ Մարտիրոսյանի հետ պայմանավորվել ենք, որ առաջիկայում միգուցե առանց լրագրողների կհանդիպենք եւ բաց խոսակցություն կունենանք գիտնականների հետ, որպեսզի նրանց մի մինչեւ վերջ հասկանամ նրանց պրոբլեմները»:*

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ